ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

2020թ. հուլիսի 21-ին, N 142
ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՍԱՐԱԼԱՆՋԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍԱՍՈՒՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2020 թվականի հուլիսի 7-ի N 95 որոշումը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության 2020 թվականի հուլիսի 17-ի N 49-1741-20 գրությունը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Սարալանջի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սասուն Հովհաննեսի Մանուկյանի պաշտոնավարությունը ժամանակավոր դադարեցնել 2020 թվականի օգոստոսի 13-ից՝ տնօրենի ամենամյա արձակուրդի ավարտի հաջորդ օրվանից:

2. Տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավոր դնել <<Սարալանջի հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության մաթեմատիկայի ուսուցիչ Լուզաննա Մնացականյանի վրա:

3. Որոշման մեկ օրինակը տրամադրել Սասուն Մանուկյանին՝ կատարումը դնելով անձնակազմի կառավարման բաժնի վրա:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆ